

Ները, մարտողութեան գործարան-  
ները): Շատ չաջողել են այն նկար-  
ները, որոնք ներկայացնում են  
սիրտը, ահանջը, ուղեղը մա-  
սամբ և այն, որ ներկայացնում է  
թոքերը և այն:

Վերջացնելով խօսքս այդ գրք-

լածքի մասին, կասեմ որ նա մի  
խոշոր վաստակ է մեր աղքատիկ  
գրականութեան համար և շատ ցան-  
կալի է, որ նա, ինչքան կարելի է,  
շատ տարածի հասարակութեան  
մէջ:

Ս. Բ.

ՏԵՐ-ԱԻԵՏԻՔԵԱՆ, Նիկողայոս—Կովկասեան հանքային ջրեր, տպ.  
Շարածէի, 1893 թ.

Այս գրքուկը մի առանձին մո-  
նոգրաֆիա չէ, նա կազմած է այն  
տեղեկութիւններից, որոնք գտնուում  
են Վելդենբումի «Ուղղեցոց»-ում,  
բժ. Յովհաննիսեանի, Անանեանի և  
Բոգոսլովսկու նկարագիրներում: Կազ-  
մողը առաջ է բերում տեղեկութիւն-  
ներ Աքասթումանի, Բորժոմի, Պեա-  
տիգորսկի, Ժելեզնավոդսկի, Նսեն-  
տուկի, Կիսլովոդսկի և Թիֆլիսի ջրե-  
րի մասին:

Այդ վայրերի մասին խօսելիս պ.  
Տեր-Աւետիքեանը նախ առաջ է բե-  
րում պատմական տեղեկութիւնները,  
այսպէս նկարագրում է ջուրը նրա բա-  
ղադրութեան տեսակէտից, չափոնե-  
լով միևնույն ժամանակ այն հիանա-  
ղութիւնները, որոնք բուժում են  
այդ ջրով:

Բացի դրանից պ. Տեր-Աւետիք-  
եանը ծանօթացնում է ընթերցողին  
այդ վայրերի բնութեան, ազգաբնա-  
կութեան և մասամբ կեանքի հետ:

Գրքուկի սկզբում՝ խօսելով վե-  
րոյիչեալ հանքային ջրերի մասին՝  
հեղինակը ասում է, որ նրանք դեռ

շատ քիչ են բարեկարգւած. «մի խօս-  
քույ ասում է հեղինակը, մեր հան-  
քային ջրերը դեռ խանձա-  
րուրքի մէջ են»... Մեզ թւում  
է, որ այդ կերպ չի կարելի ասել ոչ  
Աքասթումանի, ոչ Բորժոմի, ոչ Պեա-  
տիգորսկի և ոչ էլ մնացածների մա-  
սին, որոնք նրկթ են կազմում այդ  
գրքի: Ինքը հեղինակը գրքուկի ու-  
րիշ տեղերում մոռանալով այն, ինչ  
ասել է սկզբում, հիացմունքով նկա-  
րագրում է փառաւոր շինութիւննե-  
րը, հիանալի զբօսավայրերը, վերին  
աստիճանի չարմար լողարանները,  
որոնք գոյութիւն ունին այդ վայրե-  
րում:

Գրքուկի լեզուն ցանկալի է որ  
սակելի պարզ լինէր. բնութեան տե-  
սարանների նկարագրութեան մէջ  
մանաւանդ հակումն է երևում դէպի  
ճոռումաբանութիւնը, որով տպաւո-  
րութեան թարմութեանը ճակատ է:  
Նկատենք անցողակի, որ բազմա-  
թիւ աւցեցելունքը ասելու տեղ՝  
չպէտք է ասել չոգնաթիւ աւ-  
ցեցելունք:

Խօսելով Պետտիգորսկի մօտ գտնուող մի լեռան մասին՝ հեղինակը անուանում է նրան «Մաչդուտկա», փո-

խանակ «Մաչուկ» անուանելու, ինչպէս ընդունւած է անուանել նրան։  
Ս. Բ.

Հեղինակն? — «Վարելահողը պարարտացնելու միջոցներն: Թարգմանեց Յովհ. Արաբաջեան: Ալէքսանդրապոլ, տպար. Սանդեանցի 1892 թ.:

Այս փոքրիկ գիրքը՝ բաղկացած ընդամենը 27 երեսներից՝ պարունակում է իւր մէջ տարրական տեղեկութիւններ զանազան պարարտացնող նիւթերի մասին: Ընդհանրապէս ասած՝ գիրքը գրւած է բաւարար կերպով և կարող է օգտաւէտ լինել հասարակ ժողովրդի համար, թէև նրա մէջ կան նաև մի քանի աչքի ընկնող թերութիւններ: Օրինակ հողի («հանգստանալու») մասին բերւած հալեացքը թերի է: Խօսելով այդ խնդրի մասին հեղինակը համեմատում է հողի («հանգստանալը») ձիու հանգստանալու հետ, որը սխալ է: Ահա ինչու: Ձիու հանգստանալու ժամանակ նրա մարմինը ամենևին չի հարստանում սննդական նիւթերով (եթէ միայն նա միևնույն ժամանակ կերակուր չի ընդունում): Ընդհակառակը՝ հողը հանգստանալով հարստանում է սննդական նիւթերով և այդ առաջանում է նրանից, որ հողի մէջ գտնուող բոյսերի մնացորդները կամ բարդ հանքալին նիւթերը, որոնք պարունակում են իրանց մէջ բոյսերի համար սննդական նիւթերը, լուծուած են ժամանակի ընթացքում ու ապառաջ իրանց միջից սննդական նիւթերը:

Այդպիսով՝ թէ հողի հանգստանալու ժամանակ և թէ պարարտացնելու գէպընտ հողը հարստանում է սննդական նիւթերով, տարբերու-

թիւնը միմիայն նրանումն է, որ հանգստանալու ժամանակ հողը անհամեմատ աւելի դանդաղ է հարստանում սննդական նիւթերով քան երբ նրան պարարտացնում են:

Մի ուրիշ տեղ հեղինակը՝ խօսելով կենդանիների աղբի մասին նկատում է, որ նրան (աղբը) հարկաւոր է պահել փոսերում: Թէև այդ միջոցը երբեմն գործ է ածուած, սակայն նա այնքան էլ օգտաւէտ չէ. անհամեմատ աւելի լաւ է լինում, երբ աղբը պահուած է գետնի վերայ դարսած կոտերում:

Ինչ վերաբերում է թարգմանական լեզւին, նա պարզ է ու մատչելի հասարակ դասի համար, թէև ունի անհարթութիւններ:

Մի նկատողութիւն էլ: Այդ գրքի ընթերցողը իմանում է միայն, որ դա մի թարգմանութիւն է, բայց թէ ով է նրա հեղինակը, կամ թէ թիւ լեզւից է թարգմանած, այդ մնում է անչափ: Եւ պէտք է ասել, որ այս տեսակ վարմունքը առաջինը չէ մեզանում. հալ թարգմանիչներից ոմանք ունին սովորութիւն անչափ թողնել հեղինակի անունը: Միթէ ամօթ չէ օգտուել մի որ և է մարդու աշխատանքից, չբարեհաճելով միևնույն ժամանակ գոնէ չիչել այդ մարդու անունը:

Ս. Բ.